



ԱՐԾՈՒՒ ՎԱՍԳՈՒՐԱԿԱՆ

ԹՈՒՆՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՅԻՐ ԹԵՒՕՐ
ՅԱՐԺՐՈՒՆԻ ՄԵՆԱՍՏԵՆԷՆ ՎԱՐԱԳԱՅ

ԽՄԲԱԳԻՐ ՀԱՅՐԵՆՈՒՈՐ
ՄԿՈՏԻՉ ՎԱՐԴԱՊԵՏ ԽԻՄՆԵԱՆ

1869

Բ. 6.

ՀԱՅՈՐ ՉՈՐՐՈՐ

ՈՒՅԺԱ

ՎԱՆՏԱՍԳ

ԻՏՎԱՐԱՆԻ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ ԱՐԾՈՒՄՅՈՒՆ

Ի ՎԱՐԱՆ



ՀԱՅԿԱՅԻՆ ԿՈՄԻՏԵ
ԵՐԱՅԵՐԱՆԻ ԿՈՄԻՏԵ

ԵՐԱՅԵՐԱՆԻ ԿՈՄԻՏԵ ԵՐԱՅԵՐԱՆԻ ԿՈՄԻՏԵ
ԵՐԱՅԵՐԱՆԻ ԿՈՄԻՏԵ ԵՐԱՅԵՐԱՆԻ ԿՈՄԻՏԵ

ԵՐԱՅԵՐԱՆԻ ԿՈՄԻՏԵ
ԵՐԱՅԵՐԱՆԻ ԿՈՄԻՏԵ ԵՐԱՅԵՐԱՆԻ ԿՈՄԻՏԵ

ԵՐԱՅԵՐԱՆԻ

ԵՐԱՅԵՐԱՆԻ ԿՈՄԻՏԵ

ԵՐԱՅԵՐԱՆԻ ԿՈՄԻՏԵ

ԵՐԱՅԵՐԱՆԻ ԿՈՄԻՏԵ ԵՐԱՅԵՐԱՆԻ ԿՈՄԻՏԵ

ԵՐԱՅԵՐԱՆԻ ԿՈՄԻՏԵ



Ե Ր Ծ Ո Ւ Ի

Վ Ե Ս Պ Ո Ւ Ր Ե Կ Ե Ն

ՀԱՏՈՐ Դ .

1862

ԹԻՒ 6

ՀԱՅԿԱՋՈՒՆՔ ՀԱՅՐԵՆԵԱՅ
ԿԱՄ

ԱԶԳԱՅԻՆ ԳԱՒԱՌԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՔ .

ՆԱԽԸՆԹԱՅ յօդուածով խօսեցանք Պօլսոյ կեդրոնական վարչութեան վերայ . այժմ խօսինք փոքր իշատէ բուն հայրենեաց վիճակական վարչութեանց մասին : Ինչպէս գրեցինք յառաջ՝ Թէ՛ կեդրոնական վարչութիւնը՝ ազգային կառավարութեան կառքին իբրեւ առանցք մի է , որուն վե-

րայ կդառնան բոլոր գաւառային Վարչութիւնք. զոր օրինակ առանցքի շարժման վերայ կդառնան կառքի մի անիւները իրենց շրջանակներով եւ ճաճանչներով մէկ տեղը :

Այս օրինակը ճիշտ եւ բնական է . քանի որ կեդրոնական վարչութեան առանցքը Սահմանադրութեան բարեկարգ օրէնքով ամրացած է . քանի որ նոյն առանցքին երկայնութեան տրամագիծը ուղղութիւն չունի, ինչ կարելի բան է որ Տաճկաստանի գաւառական Վարչութիւնները բարւոք ու շիտակ ընթանան յառաջագիմութեան գծին վերայ : Ո՛վ կհաւատայ, թէ կարող է ազգային օրինադիրաւունքը Հայոց ամէն գաւառներու մէջ թագաւորել, մինչդեռ կեդրոնական տոնիկն իրաւունքը տարամերժեալ է բազմադիմի առիթներով . մինչդեռ սրտին մէջ մեռած է միութեան հօգին , անդամներու մէջ փնտռել խելագարութիւն չէ . այո՛ . . . մինչդեռ առաջնորդական դուխը վատառողջ հիւանդութեամբ վշտացած է՝ մարմնոյ միւս մասերը առողջ կը մնան . եթէ մնան , սուտ կլինի ուրիմն Պօղոսի պատգամն : Նմանապէս վտակներու մէջ պարզութիւն մի նկատեր, մինչդեռ ազբիւրին ակն պղտոր է . շինական ժողովուրդէն օրինադիրաւութիւն մի պահանջեր, մինչդեռ քաղաքացին օրինազանց է : Եթէ Պօլսոյ կեդրոնական վարչութեան ընթացքը խեղափառին պէս ծուռ եւ միավորմանի է . ալ երբ կարող է խրատել իւր ձագերուն, որ ուղիղ ընթանան : Միթէ Տաճկաստանի գաւառական Հայկազունք իրաւունք չունին խեղափառի ձագերուն չափ բողբոջել .

« Ո՛վ կեդրոնական Վարչութիւնը, դու , որ իրեւ Հայր կամ իմաստուն տնտես կհանդիսանաս Հայոց գերդաստանի տան վերայ . նախ եւ առաջ հայրական պարտուց օրէնքները ճանչցիր ու հետեւաբար սահմանէ տնտեսութեան կանոնները .

որպէս զի կարող լինիս իբրեւ իմաստուն տնտես Հայոց
ընտանիքը ի ժամու կերակրել կամ ազատել նորա զաւակ-
ները այժմեան սովալլուկ թշուառութենէն : Արդարեւ
Պօլսոյ ազգային վարչութեան ատեանը բոլոր Տաճկաստա-
նի նահանգական Հայոց համար բուն բարեկարգութեան
ամբարն է . ուսկից պէտք է բարեկարգութեան օրէնքները
մատակարարուին Սահմանադրական տնտեսութեամբ . եթէ
այս ամբարէն պակասին կամ սպառին առատ ցորինոյ շեր-
ջերը, այսինքն օրէնք եւ օրինապահ . կամ Եղիպտոս ազա-
տող Յովսէփի նման իմաստուն մատակարար . մի տարակու-
սիր, ինչպէս Յակովբայ տունը, նմանապէս Հայկայ տունն
ալ կ'տանջի այսպէս միշտ անբարեկարգութեան սովին ե-
րեսէն :

Այս բնական օրինակներէն կարող ես դու ինքնին մա-
կաբերել, ուշադիր ընթերցող, եթէ Տաճկաստանի նահան-
գական Հայոց բախդին անիւը կեդրոնական վարչութեան
առանցքին վերայ կ'դառնայ, թէ ուղիղ է առանցքը՝ ուղիղ
կը դառնայ եւ թէ ծուռ՝ հարկաւ ծուռ կ'դառնայ եւ ա-
նիւը . թէ ինչպէս, սկսենք այժմ խօսիլ :

Ամէն յառաջադիմական լաւութիւնները իւր սկզբէն
ծագումն ունին . երբեմն Հայոց համար բուն իրենց հայ-
րենիքն էր կեդրոնական յառաջադիմութեան մայր կամ
սկիզբն . ո՛հ , այս երջանկաւէտ բախդը վերջացաւ հայրե-
նիքէն եւ դիտես թէ գաղթական Հայերը իրենց հետը ա-
ռին եւ տարին : Այժմ Բիւզանդիոնի Հայկազունքը բոլոր
Տաճկաստանի Հայոց համար նախնի հայրենեաց յառա-
ջադիմութեան բախդին առանգապահն են . թէպէտ հայ-
րենիքէն դուրս , բայց աւելի հայրենեաց համար մտածող
մասն են . թող դայս՝ քաղաքական զօրութեամբ ալ նախա-

պատիւ և համարուն Բարձրագոյն դրան մօտը Թագաւո-
րական մայրաքաղաքին մէջ բնակելով : Ուստի Տաճկաս-
տանի Հայոց այս մասն միւս բազմապատիկ մասերուն իր-
բեւ ամենափոքր անդամ մի է, բայց իբրեւ գլուխ կամ ա-
ռաջնորդ և հանդիսանայ՝ աւելի Սոցիոմոնին տուած իրաւուն-
քով Թէ « Որ հանձարեզն է զառաջնորդութիւն ստասցի » .
քան Թէ քաղաքական ազդեցութեամբ : Թէեւ դեռ հայրեն-
եաց մէջ հանձար մեռած չէ . կան տակաւին սակաւագիւտ
կենդանի ու բնական հանձարաւորները , որոնք շատ մասե-
րու մէջ և գերազանցեն քան զԲիւզանդացիս . միայն Թէ
երանի՛ կ'լինէր հայրենեաց . եթէ այս հանձարաւորները
իւրեանց բնատուր խորագէտ հանձարեղութիւնը հաս-
րոակաց օգտին համար գործի զնէին եւ ոչ Թէ անձնընտիր
լինելով լոկ անձնական շահուն համար : Բայց ճշմարտու-
թեամբ խոստովանելով Թէ Եւրոպական քաղաքագիտու-
թեամբ Թէ ուսումնասիրութեամբ եւ Թէ եռանդուն ազ-
գասիրութեամբ յառաջագիմու թեան ասպարիսին մէջ մըր-
ցանակն առնելու արժանաւոր են Բիւզանդացի Հայկա-
զունքը՝ հայրենաբնակ Հայոց հետը համեմատելով :

Այս արժանաւորութեան համար է ահա, որ իբրեւ գլ-
լուխ եւ առաջնորդ և պարծին Տաճկաստանի Հայոց վե-
րայ . բայց լոկ եւ ապարդիւն պարծանքն ալ օգուտ չի բե-
րեր, մինչդեռ և տեսնամք այժմ, զի կեդրոնական Վարչու-
թեան առաջնորդութիւնը՝ հակառակորդներուն ձեռքէն
վստաստակարեկ եղած դէպ ի յառաջագիմութիւն տարող
ճանապարհին վերայ և դեգերի : Ի՞նչ և կարծես , խոհական
բնութեցող, հապա դաւառական Հայկազունք որչափ և դե-
գերին , ապշութեամբ , թմրութեամբ , խռովութեամբ , երկ-
պառակութեամբ , բռնաւորութեամբ , կուսակցութեամբ ,

անիրաւութեամբ, յափշտակութեամբ, զրպարտութեամբ, զրկողութեամբ, չարախօսութեամբ, մատնութեամբ, անօրէն յխակալութեամբ, վրէժխնդրութեամբ, եւ այլ բազմաբխի հայրենակործան չարեաց աղէտներով : Եթէ այսպէս, յիշենք ուրեմն Յիսուսին խօսքը, որ շատ յարմար է . « Եթէ լոյսդ որ իքեզ խաւար է, խաւարն ո՞րչափ եւս » : Առ ձեզ կ'սօսի Արծիւը, Բիւզանդացի Հայկազունք եւ կեդրոնական Վարչութիւն, եթէ դուք, որ իբրեւ լուսաւորեալ կ'պարծիք, դեռ այդպէս կ'դեգերիք եւ կ'խարխափիք խաւարին երկպառակութեան եւ խռովութեան ճանապարհներու մէջ . հապա ո՞րչափ ձեզմէ առաւել խեղճութեամբ կ'խարխափին գաւառական Հայկազունքը, որոնք ձեր ունեցած քաղաքական եւ մտաւորական լուսաւորութենէն զուրկ՝ ռամկավար տգիտութեան սոուերին տակ կրնտին դեռ ամենատխուր թշուառութեամբ : Կրկնենք այս տեղ Յիսուսին միւս խօսքը, « Ճրագ մարմնոյ ակն է, եթէ ակն քո առատ է, ամենայն մարմինդ լուսաւոր եղիցի եւ այլն » : Ընդ հանուր Տաճկաստանի Հայկազանց ճրագը Պօլսոյ կեդրոնական Վարչութեան աշտանակին վերայ դրուած է . որով ուղիղ կ'հասկցուի, թէ Հայկազանց ամբողջ մարմինը այս ճրագին առատ լուսոյ շառաւիղներէն պէտք է լուսաւորուի : Իսկ յորժամ սողամուտ երկպառակութեան չարաշունչ օձը այս ճրագին լոյսը փչելով փչելով նուազ ցուցեր է, հարկաւ մարմինը մութ մնալով՝ այս կողմ այն կողմ կ'խարխափի կուրօրէն :

Այսչափ խռովութիւն, երկպառակութիւնը, որ Առաջնորդաց վիճակներու մէջ տեղ տեղ բաւական ժամանակէ ի վեր տիրած է, ոչ ապաքէն ասոր բուն գայթաղութեան պատճառը Պօլսոյ կեդրոնական Վարչութիւնը եւ նոյն իսկ

Պատրիարքարանն է : Հասարակաց առածը խիստ ճշմարիտ է . « Ակօսին ծռիլը , ամուլ եղներէն է » : Հայրենեաց ռամկալարութեան մէջ երկպառակութեան հոգին շատ ճանապարհ ունի սարգելով ներս մտնելու . վասն զի իւր հրապարակները մութ ու գողադարան են . բայց ինչպէս կ'համարձակի Բիւզանդիոնի պայծառ հրապարակներու մէջ մտնալ , մինչդեռ այնչափ ծրագներով լուսաւորած է : Ասալ զարմաթ չէ , վասն զի նոյն երկպառակութեան օձը Աստուածային լուսով ճառագայթուած դրախտին մէջն ալ մտաւ :

Ուրեմն թող անմեղադիր կացուցանեն Պօլսոյ Հայկազունք , եւ ազգային նախապատիւ Վարչութիւնը զիեռարացիները ու Վանեցիները . վասն զի ասոնց մասնաւոր յեղափոխութեան յանցանքք , խիստ պզտիկ ու թեթեւ է համեմատելով Պօլսոյ ազգայնոց յեղափոխութեանը : Աւելի ցաւն այս է , եթէ նահանգական վիճակներում ազգայնոց մէջ վէճ պատահելու լինի , Վարչութիւնն իբրեւ խաղաղարար Մովսէս կարող է կամ իշխանաբար կամ յորդորելով ասել . « Արք եղբարք էք , ընդէր զրկէք զմիմեանս » իսկ եթէ նոյն իսկ Վարչութիւնն ծփի երկպառակութեան ալիքներով՝ ո՞վ արդեօք գաւառական Հայկազանց մէջէն իբրեւ Մովսէս հանդիսանալով կարող է զիրենք ի խաղաղութիւն համոզել եւ թէ մէկը համարձակի Մոսիսարար խրատելու , գուցէ լսէ այս յանդիմանութիւնը . « Դու Վանեցի , Ախարացի եւ Մշեցի , կամ անուսումն շինական եւ ռամիկ ինչպէս կ'համարձակիք ազստ մայրաքաղաքացի լուսաւորեալ Հայոց իրաւ տալու . եթէ կարեկցութեամբ իբրեւ բժիշկ ձեւանալ կուզէք , նախ բժշկեցէք ձեր գաւառներու մէջ պատահած երկպառակութեան ցաւերը . յետոյ դիւրոյն համար հոգացէք . մի թէ իրաւունք ունին զանա-

զան վերքերով վարակած անդամները, մեր գլխու բազմապատիկ ցաւը բժշկելու . ոչ ապաքէն առաւել դուք մեր գեղերուն կարօտ էք քան թէ մեք ձերը :

Այս եղանակ յանդիմանութիւն լսելով չզայրանաք, հայրենեաց Հայկազունք, այլ հեղաբար ձեր իրաւացի պատասխանը դարձուցէք զէպ առ Վարչութիւնն եւ ասացէք : Մեր բոլոր անդամներուն մէջ տարածուած բազմապատիկ ցաւերուն, գիտե՞ս, գլուխդ է իսկ պատճառ . եթէ գլուխդ ժիր եւ ասողջ լինէր, անշուշտ ողորմելի անդամները այս ցաւեր չէին կրեր : Աւանդ, մեր ապերջանիկ վիճակին, պիտի կրեմք եւ պիտի համբերեմք . յոյս չիկայ մեր առողջութեանց ցորչափ վատառողջէ գլուխն : Ա՛խ գլուխ, ակն գլուխ, որ մարմնոյ գեղեցիկ կազմուածքին մէջ բարձր ու պատուականագոյն մասն ես, բու բոլոր ցաւերդ թող մեր վերայ գար . դու միայն ողջ մնալով՝ բաւական էիր մեզ . բայց արդ ոտքէն մինչեւ ի գլուխ գլխէն մինչեւ ի ոտքը, Մարդարէի ասածին պէ՞տ չիք տեղի առողջ :

Մարդոյն խելքն է միայն որ կ'կառավարէ բոլոր մարմնոյ անդամները . խելքին բուն գործարանն ալ գլուխն կամ խելապատակն է . եթէ ողջ է գլուխն կամ պնդակազմ է խելապատակն՝ հարկաւ կ'հետեւի քաջառողջութիւն ամբողջ մարմնոյն : Ճառի գլուխը իւր արմատն է . ան տեղէն կը զօրանայ եւ կուռճանայ կամ կ'տկարանայ եւ կ'թօշնի : Մարդոյն զարդացման արմատն ալ իւր գլուխն է ոտք չէ . գլխէն զէպ ի անդամները կ'ներդործէ միշտ իւր աճեցուցիչ զօրութիւնները : Ուստի վնայ եկեր է բոլոր անդամներուն մինչդեռ գլուխ վշտահար զաւով խռովութեամբ տատանեալ բարձին վերայ դրած ծանր հիւանդութեամբ կը հեծէ ու կ'ոքայ : Մեք դժբախդ անդամներս ալ գլու-

խորդ տարախոխիկ ախտէն ախտանալով՝ այսպէս բազմադի-
մի ցաւերով լեցուած կ'վշտանանք առ հասարակ :

Մինչդեռ կ'յուսայինք գլխոյդ առողջութիւն տեսնալ,
երբ լսեցինք թէ Սահմանադրութեան բազմահմուտ բժիշկ-
ները մահճիդ բոլորտիք ժողովելով գլխոյդ մահալտանդ
ցաւերուն դարման կ'մտածեն. այո՛, մտածեցին եւ աշխա-
տասէր հանճարեղութեամբ պատրաստեցին քեզի համար
այնպիսի դեղ մի, որով գլխոյդ ցաւը անշուշտ պիտի բժըշ-
կուէր. ու երկարժամանկեայ այդ մահճին մէջ անբարեւ
կրորդութեամբ հիւանդութեամբ ծերացած հասակդ՝ դար-
ձեալ պիտի առողջանար նոր ազգային բարեկարգութեան
աշխոյժ երիտասարդութեամբ : Ահ, մեր ուրախաւիթ յոյս
ի գերեւ պիտի ելնէ. վասն զի այս եւս լսեցինք ու հաւա-
տացինք, եթէ երկպառակեալ կուսակցութեան հոգին, իւր
համամիտ զինուորներով յարձակերէ մահճիդ վերայ եւ
անխնայաբար գլխոյդ ցաւերը կրկնապատիկ էվելցնելէն
յետոյ՝ առողջութեանդ համար պատրաստուած դեղերն
ալ թափել ուղերէ : Աւամիկ ու ագէտ կարծուած ան-
դամները հայրենեաց մէջէն իրաւունք չունին դոցա խե-
լադարութեան վերայ ծիծաղել : Միթէ դեղեր թափելով
հիւանդը մեռցնել կուզեն. չի մեռնիր, նորա գլուխը երկար
վշտակրութեամբ տոկուն ու դիմացկուն դարձերէ. մինչեւ
այժմ առանց դեղերու ապրերէ եւ կապրի տակաւին. բայց
առողջ դարուս մէջ Հայն ինչո՞ւ պիտի հիւանդ ապրի
անդամալուծ ինման միշտ մահճի մէջ այս կողմը այն կող-
մը գտնալով տաղնապելով, ահ, ոսկորներն անգամ մաշե-
ցան : Խորհրդակորոյս մարդիկ, այդ անմիտ ձեռնարկութիւն
կրնեն, չխորհելով բնաւ թէ ազգին բեղմնաւոր արդան-
դը շատ բժիշկները պիտի ծնանի այսուհետեւ հեղձահեղ

որոնք այժմեան դեղերէն աւելի զօրաւորագոյն պիտի պատրաստեն : Կուզէ՞ք դեղեր թափել, դիւրին ճանապարհ ցոյց տամ ձեզ. քակեցէ՞ք ձեր շինած դեղարանները. այսինքն դպրոցները եւ ուսումնարանները. որպէս զի ձեր զուլակները ձեզմէ աւելի բժշկութիւն չսորբին : Հնու-
թեամբ նոր ժամանակի հետ կռուել յիմարութիւն չէ : Այո՛ յիմարութիւն է. բայց պնդագլուխ յամառութիւն ալ մինչեւ գերեզմանի դուռը դադարողով երթալով հազիւ կհամոզուի : Յուսահատիլ պէտք չէ ասոր համար. թէ ուշ թէ անագան կամ կխոնարհի կամ կհամոզուի : Հայն այսուհետեւ իւր պնդագլուխ խտուութիւնը պիտի կակղացնէ դեղեցիկ դաս-
տիարակութեամբ եւ ազգային օրինաց լուծը սիրով պի-
տի կրէ իւր պարանոցին վերայ. վասն զի փորձով հասկցաւ
թէ պնդագլուխ չորութեամբ միշտ զարնուելով զարնուելով
ինքն կ'իշխի. ո՛հ, մինչեւ անգամ Հայու միութեան ամբող-
ջութիւնը մանր փոշի պիտի դառնայ. կամ ստրկութեան
ու բռնութեան քամիները զինքն հոսելով հոսելով պիտի
ոչնչացնէ. ո՛չ, ո՛չ, Հայութիւն անմահ է երբ ինքն սկսեց
օրէնքը եւ դաստիարակութիւն սիրել :

Ուրեմն, մերձաւոր հայրենակիւք, գաւառական Հայկա-
զունքք, սիրենք ամենայն սրտով ազգային բարեկարգու-
թեան օրէնքը, սիրենք նա եւ դպրոց եւ դաստիարակու-
թիւնը. մեր վիրալից անդամներուն առողջացուցիչ դեղը
ատնք են միայն : Ձեր վիրաց կարեկից Արծիւը ձեզմէ
խորհուրդ կհարցնէ, արդեօք սպասե՞նք մինչեւ որ Վար-
չութեան գլուխը բժշկուի, մեր սյսչափ աղետալի վէրքերը
անխնամ թող տալով. ո՛չ, սպասել հարկ չէ. մեք մեր ձեռքն-
հաս կարողութեան չափ հայրենեաց անդամներուն զանա-
զան վէրքերը պատանելու ճարը տեսնանք. ու միանգա-

մայն գլխոյն առողջութիւն համար ալ սրտանց բարեմաղթենք :

Ամէն գաւառներու մէջ վիճակաւոր առաջնորդ հանդերձ դանուած իշխաններով մէկ մէկ պզտիկ գլուխը կ'ձեւանան եւ թէ միանան ու կամենան՝ անտարակոյս իւրաքանչիւր վիճակին մէջ գտնուած վերքերուն կարող են զօրաւոր բժիշկ հանգիստնալ : Բժիշկ Հայրենեաց մահճին մօտ պէտք է . խիստ ուշ եւ անագան կ'հասնեն Վարչութեան դեղերը մինչեւ ի Հայաստան, մանաւանդ երբ ինքն ալ կ'առաջնապի դեռ կուսակցութեան ցաւերով : Միթէ Հայրենեաց ախտերուն համար դարման գտնել ամենադժուարին խնդիր մը է . քան, ամէն մէկ վիճակներում քիչ շատ բնական ու հանճարաւոր բժիշկները կ'գտնուին , սիրտը , միութիւն եւ կամք պակաս է միայն : Ասոնք նիւթական թերութիւն չեն , հապա մարդկային կամ բանականութեան թերութիւն են . ուրեմն այս թերութիւնները լեցնելու համար ուսմունք եւ դաստիարակութիւն հարկաւոր է : Հայոց երախտները դաստիարակութեան ջուրով մկրտելու համար Հայաստանին մէջ ոչ գետ , ոչ վտակ կ'պակասին . ի՞նչ բան է ապա , որ կարգելէ Հայկայ ընտիր ու կոյտառ գաւաղները առանց մտաւոր զարգացման միայն նիւթական անպէտ մարմնով երախայութեան տպիւտութեան մէջ աճին : Գետեր ու վտակները պատրաստ , հապա էլ ի՞նչ կայ պակաս , դու ասա , հայկազն ընթերցող , արդեօք միայն մկրտիչ քահանայն ու կնքահայրերը . այո՛ , թող իբրեւ բժիշկ կամ մկրտիչ հանգիստնան վիճակաւոր առաջնորդները , թող իբրեւ կնքահայր իրենց բազուկներ բանան ու գգուեն Հայոց երախտները ազգասէր իշխանաւորաց խումբը . եւ ահա Եփրատն աւազան կ'գառնայ ու բերաւոր Հայոց գաւաղները կ'մկրտուին ու կ'լուսաւորուին ուսմամբ :

եւ դատարարակութեան կենդանի սուրբ ջրով :

Հայրենեաց մահացող վէրքը ազիտուն է . ցորչալի այս ժանտախտ վէրքը Հայոց սիրտը ու մտքը վտարակեր է՝ զուր եւ ընդունայն է ուրիշ տեսակ վէրքերուն դարման տանել : Ձեռք զարնենք նախ եւ առաջը այս երկու հոգեկան մասն բժշկելու . եւ ասոնց համար զօրաւոր բժիշկը՝ դատարարակութիւնը եւ ուսմունքն է : Դատարարակութեան եւ ուսման գործադրութիւնն ալ մեր ձեռքն է . Վարչութեան կամ Սահմանադրութեան ձեռքին այնչափ կարտուծիւն չիկայ այս մասին մէջ : Վասն զի յառաջ քան զայն Հայստանի գլխաւոր նահանգները ուսման յարգը ճանչնալով՝ տասն եւ հինգ տարիէն յառաջ սկսեցին քաղաքներու մէջ դպրոցները հաստատել . որոնց արդիւնքը քիչ չառ կ'վայելին այժմ ուսեալ պատանիներուն հայրերը :

Եթէ ուսմունք եւ դատարարակութիւն փոքր իշատէ իրրեւ ձայն բարձառոյ չկարապետեն . եւ Հայրենեաց միջի ռամկութեան անհարթ ճանապարհները ուղղելով կամ դիւրացնելով չպատրաստեն , ճշմարիտ խօսելով՝ փրկիչ կարծուած Սահմանադրութիւնը խիստ դժուարաւ պիտի կարողանայ ճանապարհորդել Հայրենեաց ռամկավարութեան դարուփոս առապարներուն վերայ մինչդեռ տեսանք փորձով՝ թէ նոյն Սահմանադրութիւնը որչափ ապառաժներու զարկաւ իւր առաջին քայլափոխը Բիւղանդիոնի հրապարակներու մէջ . որ կ'կարծուէր սակաւ ինչ Եւրոպոյ քաղաքականութեամբ իւր նախնի բռնութեան առապարները դիւրացած ու պատրաստուած էր : Թէ եւ անուրանալի է այս ճշմարտութիւնը . որ Սահմանադրութեան զօրաւոր դործիքը Հայրենեաց ռամկութեան ու բռնութեան առապարները խորտակելու համար մեծ միջոց է եւ մեծ օգտակա-

թուօթիւն ունի : Որ է ըսել ուսումն եւ Մահմանադրու-
թիւնը՝ իրարու փոփոխակի կ'կարապետեն ազգային յառա-
ջագիմութեան ճանապարհին մէջը : Բայց Սահմանադրու-
թեան օրինաց լուծը քաղցր դիւրութեամբ կրելու համար
հարկաւոր է նախ Հայրենեաց անվարժ պարանոց կրթել
ուսման եւ դաստիարակութեան գաւազանով : Բնութիւնն
ալ եւ Աստուածային օրէնքն ալ այս կուսուցանեն : Հը-
րեական ազգն խիստ դժուարութեամբ կընդունէր Աստուա-
ծադիր օրէնքները , ասոր պատճառը՝ անդրանիկ Նահատա-
կին յանդիմանութիւնը կ'այտնէ մեզ . « Խստապարանոց
եւ անթլպատ սրտիւք , դուք հանապազ հոգւոյն սրբոյ հա-
կառակ կայք եւ այլն » : Առանց կրթութեան ազգը խոս-
տապարանոց է , առանց դաստիարակութեան՝ սիրտն անթըլ-
պատ է : Ի՞նչ զանազանութիւն կայ այս մասին համար
Հայուն եւ Հրէին բնաւորութեան մէջ , վասն զի մեր Սոե-
փաննոսն ալ (Խորենացին) զմեզ նոյն ոճով կ'յանդիմանէ .
Իբրեւ բարձրայօն , իբրեւ խստասիրտ , իբրեւ ինքնահաւան :
Ատոնքնն ահա , որ դոմէշի վզի նման բրդացուցերեն Հայ-
ութեան վիզը . ծանր կ'թուի եւ դիւրութեամբ չի ընդու-
նէր ազգային բարեկարգութեան լուծը : Աշխատենք ու-
րեմն յառաջ նախակրթութեան դաստիարակութեամբ թըլ-
պատել Հայութեան սիրտը՝ իւր բնական կարծուած ինք-
նահաւան եւ խստասիրտ բարձրայօնութենէն . որպէս զի
առանց ականջ բռնելու եւ բռնութեամբ քաշելու ինքնա-
յօժար մատուցանէ իւր պարանոցը Սահմանադրութեան
լուծին տակը : Վասն զի օրէնսդրութիւնը՝ բռնութիւն չի
պահանջեր եւ թէ պահանջէ . այդ եղանակ իրաւունքը
Հայու ստրուկ վիճակին համար աւելորդ է . թէ եւ ինքն
ստրուկ , բայց դեռ սէգ եւ բարձրավիզ է իւր պարանոցն .

զոր Տրդատայ զւժգին բազուկները հազիւ կարացին ճրժել եւ հնազանդեցնել Աւետարանի քաղցր լուծին ներքեւը : Սահմանադրութեան բեռն թեթեւ ու փոքրոգի է . մարդ կ'զարմանայ, ամենածանր թշուառութեան եւ սորվելութեան բեռնակիր Հայն ինչո՞ւ կ'փախչի . անոր համար կ'փախչի, որ ինքն դեռ անկատար տրմուղէ քաղաքական կատարելութեան մէջ : Այս ասելով թող տանք արդեօք որ տրմուղ միշտ անկատարութեամբ տրմուղ մնայ . ո՛չ, այդչեն ներքի ոչ բանականութեան եւ ոչ դարուս յառաջադիմութեան օրէնքը : Բոլոր Եւրոպիոյ խուժալար դանդաղ ու տկար տրմուղները, զօրաւոր ձիերու նման արշաւեցին անցին Ասիոյ քաջ հսկաներէն ու նախնի արեւելեան ազգաց յառաջադիմութեան մրցանակն յախշտակեցին . ո՛հ, մի թէ Հայու ճակատագիրն է յաւիտեան տրմուղ մնալ . Հայն որ երբեմն իբրեւ ահի պարանոց երիվարը իւր ազատարշաւ ոտքին տրոխիւնով աշխարհ կ'դողացնէր :

Արթնցէք ուրեմն , Հայրենակից Հայկազունք , ալ այսուհետեւ ամօթ մեծ է հսկայապանծ Հայուն միշտ տգիտութեամբ տրմուղ մնալ, մինչդեռ արեւմտեան ազգերը իրենց նախնի ցածութենէն բարձրացան մինչեւ ծայրագոյն յառաջադիմութեան հասակը : Արթնցէք մեր տրմուղ զաւակները կրթնէք դաստիարակութեամբ . եթէ թողունք այսպէս՝ անպիտան ծնունդ են նոքա Հայրենեաց համար . մանաւանդ թէ էշ եւ հրէշ են բանականաց կարգին մէջ քան թէ մարդ մոտաւոր :

Բանի որ կակուղ է նոցա մանկութեան պարանոցը՝ վարժենք դաստիարակութեամբ, ու տեսնանք փորձով թէ ինչպէս դիւրընտել սովորութեամբ ամենայնօժար օրոտով իրենց վրին վերայ կ'բառնան ազգային Սահմանադրութեան փոք-

րիկ լուծն, որ աւելի ապագայ սերունդներուն քաղցր պիտի թուի քան թէ ներկայիս : Արթնցէք դարձեալ, Հայրենեաց ռամկուծեան առապարները հարթենք, խոչնդոտ ճանապարհները դիւրացնենք, կրից ապառաժները խորտակենք, նախալարժ դաստիարակութեան եւ ուսման զօրաւոր գործիքներով : Թող այնուհետեւ Սահմանադրութեան կառքը արձակ համարձակ անկասկած ուղեւորէ դէպ ի հայրենիքը ինչպէս երկաթուղի հարթահաւասար ճանապարհն մի վերայ : Ոչ կրից ապառաժները, ոչ Երկբովի աւազակները կարող են դիմադրել կամ կիսամահ վիրաւորել եւ ձգել ճանապարհին վերայ :

Իբրեւ ձայն բարբառոյ Հայաստանի անապատներու մէջը կ'գոչէ եւ կ'քարոզէ Վասպուրական Արծուին, արթնցէք Հայկայ որդիքներ, արթնցէք նախատես զգուշու թեամբ պահապան ու պաշտպան պատրաստենք, ամէն կողմէն շուրջ փակելով Սահմանադրութեան նորածին մանկուծիւնը, որպէս զի առանց երկիւղի կամ կասկածանաց ամէն դժուարութիւնները թեւակոխելով անցնի եւ մեր հայրենեաց մէջ հաստատելով իւր օրինաց գահը՝ թագաւորէ արդարութեամբ ու մշտնջենաւոր խաղաղութեամբ :

Արթնցէք, մեծ Հայաստանի թմրեալ եւ քնասէր որդիք, մեր հայրենի տան պատիւ ճանչնանք ու պաշտպանենք. սուրբ բարենախանձուն կրակը թող վառէ մեր պաղարիւն սիրտը . մեծ ամօթ չէ՞ արդեօք, մինչդեռ կրտսերն եւ յոյժ սակաւաթիւ մասն՝ երիցագունին ու բազմապատիկ մասին կ'հրամայէ կամ իբրեւ օրէնսդիր կ'հանդիսանայ : Բուն հայրենեաց մայրենի ծոցին մէջ բնակող երիւ միլիոնէն աւելի ժողովուրդը բերան բացած ապուշ ապուշ կը հայի եւ գրէ թէ աչքին լոյս թափեցաւ սղասելով՝ որ

պէս զի Վոսփորին եղերքէն Սահմանադրութեան տախտակ-
ները ընդունի : Այո՛ գովելի է այդ քո հաւատարմութիւն,
առանց յուսահատութեան սպասէ , չըլինի թէ հրէական
ապերախտ թերահաւատութեամբ ձեռք զարնես անիրա-
ւութեան հորթ պաշտելու :

Բայց արդեօք աւելի վայելուչ չէ՞, որ հայրենեաց ժողո-
վուրդը դէպ յառաջագիմութեան աւետեաց երկիր ա-
ռաջնորդելու համար մեր այդ Սահմանադրութեան Հայ
պատգամախօսները Մասիսի գլխէն վար իջնային կամ Այ-
րարատայ դաշտէն ելնէին : Ինչպէս քու անձինդ կորուստը
քու ծոցիդ մէջ ծնար , փրկութիւնդ ալ պէտք է քու ծո-
ցէդ ծնանի : Դու երբեմն բազմածին մայր , շատ օրէն ըս-
դիր զաւակներ բերիր քո բեղմնաւոր արգանդէն . իսկ այ-
ժմ տգիտութիւն դասկեց քո պողաբեր արգանդը . այդ-
պէս նախատինք չե՞ս համարիր քեզ երկար ամլութիւնդ
կամ նոր զաւակ ծնանելու յոյսէն վերջանալով՝ հարկը-
ամեստ պառաւ Սարրաին պէս կ'ժպտիս մինչդեռ հայրենեաց
հրեշտակները քեզ աւետիս կուտան : Ո՛ւր են քո բարգա-
ւաճ իմաստասէր որդիքներդ , կ'յիշե՞ս արդեօք , որոնք եր-
բեմն մայրենի տանդ առատ սեղանին շուրջ նստած նորա-
տունկ ձիթենիի պէս կ'զարդարէին քու բոլորդիքը . բայց
արդ այն ամենալի սեղանէն եւ իմաստուն որդիքներէդ
զրկուած , մուրացկանի մի նման Բիւզանդիոնի գաղթական
զաւակներուդ դուռը դեգերելով , ո՛հ , Սահմանադրութիւն
կը մուրաս եւ այդ մուրացկանութեան սակաւիկ վշտանք-
ներով պիտի կարողանա՞ս սովառանջ զաւակներդ կշտացը-
նել : Միտ բեր այս առածները « Մուրացկանութիւն միշտ
կարօտ է , մուրացկանին փոր միշտ անօթի է , մուրացկանին
աչքը միշտ դէպ ի դուրսն է » :

Ուրեմն ետ դարձիր այդ մուրացկանութեան դռներէն.
 ջանք արաքո մայրենի արգանդին արդիւնաբեր արտերը
 մշակելու. որպէս զի առատ առատ ցորեանները բուսնին ու
 զաւակներդ կուշտ կուշտ հաց ուտեն : Գլտե՛ս ի՛նչ էսեմ,
 դարձեալ կրկնեմ քեզի համար , լաւ հասկցիր : Բռն իսկ
 մայրենի ծոցիդ մէջ բնակած զաւակներդ, որք իբրու ան-
 վար արտ խոպանամիտ ռամկութեան մէջ կորդ մնացե-
 ր են . դոցա սիրտ , հոգին եւ միտքը դաստիարակութեամբ
 եւ ուսմունքով կրթե՛. կտեննաս այն ժամանակը՝ թէ Սահ-
 մանադրութեան պատգամախօսները Հայաստանի կեդրո-
 նէ՛ն դուրս կելնեն եւ կիշխեն եթէ Վոսիորի հեռաւոր ե-
 ղերքէն : Դու ի՛նչպէս կկարծես, կրտսեր Հայկազունք
 Պօլտոյ՝ քաղսքական ազդեցութեամբ իրաւունք կունենան
 քեզ Սահմանադրութիւն գրելու կամ բազմաթիւ երկրա-
 գոյն որդւոցդ վերայ իշխելու . քան , կարծիքդ շատ սխալ
 է , աւելի իմաստասիրական գլխով ու խելապատակով կիշ-
 խեն : Պիտի ծառայաբար հպատակիս , քանի որ տգիտու-
 թեամբ ստրուկ են որդիքդ . պիտի հրամայես տիրաբար , երբ
 զաւակներդ յառաջագիւմելով նոցանից աւելի կարող կլի-
 նին իմաստասիրելու . վասն զի այսուհետեւ որդիքներուդ
 ազատութիւնը՝ միայն իմաստասիրական առաքինութիւնն է :
 Կուզե՛ս ստրուկ տգիտութեան լուծը վզէդ ձգել՝ գիտու-
 թիւն սիրէ . կուզե՛ս այդ այժմեան ամօթերես մուրացկանու-
 թենէն ետ դարձնուլ տանդ մէջ աշխատիլ եւ ապրիլ , ուս-
 մունք սիրէ . կուզե՛ս նախնի դարուդ հրաշարուեստ Մովսէս-
 ները իբրեւ նոր պատգամախօս Մասիսի գաղաթէն վար
 իջնան եւ Վարարատայ կեդրոնական աշխարհին ընդհանուր
 Հայոց համար Սահմանադրութեան անխշորիւ տախտակ-
 ները ընծայաբերեն . դարձեալ դպրոց սիրէ , դաստիարակու-

Թիւն սիրէ, եւ ահա կ'տեսնաս քու նախնի բախդին արեւ վերասին ծագելով՝ շող կարճակէ տանդ մէջ եւ քեզմէ հեռա-
յած երջանկուծիւնը կ'դառնայ վերստին հայրենի դուռը :

Հէրիք չէ՞ այսչափ սրտահար համոզանքներ քեզի համար,
խուլ եւ համր Հայաստան, եթէ որ ականջ ունիս լսելու .
Արծուոյն ձանձրութիւն չէ, մեռեալ ականջներդ մօտ
կեցած պիտի կանչէ, որչափ ձայն ունի . պիտի խօսի ազա-
տաբար, որչափ իւր Թախչները կ'զօրէ . պիտի գրէ այսպէս
եւ հրատարակէ, հանուր Հայկազանց հրապարակներու մէջ
քարոզ կարդալով, որչափ քո սէր նորա սիրտը եւ հոգին կը
վառէ . պիտի այսպէս միշտ իւր գրչի կողով՝ քո հաստ յա-
մառ եւ անընտոտ կողը ստէպ ստէպ խթէ մինչեւ արթ-
նանաս այդ խոր եւ անհոգ Թմրութենէն, իսկ եթէ Ար-
ծուոյն ու բոլոր հայրենասէր խմբագրաց անձնանուէր ջան-
քերը դու դերեւ հանես ու տակաւին շարունակես այդ
անգգայ խլութեան մէջ, ալ այնուհետեւ Յիսուսի սքան-
չելիաց մատուցներ պէտք են խպառ իլացած ականջնե-
րդ բժշկելու : Բայց մեզ կմնայ յուսկտուր սրտով խորե-
նացւոյն պէս ողբերը յօրինել քու վրադ եւ յուսնին մե-
ռելոց խօսելէն մեր ձայն կտրել :

ԶՈՂԲ ԵՐԵՄԻԱՅԻՆ ԴԱՐՁՈՒՑԵԱԼ
Ի ՀԱՅԱՍՏԱՆ ՆԱՏԵԱԼ ՈՂԲԱՆՈՒԻՐ ԼԱՅ ՎԱՍՊՈՒՐԱ-
ԿԱՆ ԱՐԾՈՒԻՆ

ԱՍՏՈՒԱԾ հօր, տակաւին չհայիս յողքատուծիւն
սիրեցելոյն քո Հայաստանի . գաւազանաւ սրտմտութեան

Քոյին հարեր վշրեցեր զընտիր ընտիր անօթս փառաւորո՞ւ
 Թեան տանն Թորգոմայ. զԹագ, զգաւազան եւ զլիւսանու
 Թիւն նորա խորտակեցեր ընդ ոտիւք արդարութեան քո :
 Մերկայուցեր զաշխարհանագն Հայաստան ի Հայրենագարդ
 ընչից եւ ստացուածոց իւրոց. որդէք իւր մեռան ի հա-
 րուածս տարաշխարհիկ գերութեան. արդ ինքն միայնակ
 որպիսեօք երբեմն ծառայն քո Յովք, նստի վիրալից ան-
 դամբ յաւերախս Հայրենեաց իբրեւ յաղբիւս Թշուառու-
 Թեան յուշածելով զիւր առաջին երջանկութիւն, եւ լայ
 հանապազ զայս վերջին ապարախտութիւն :

Մի Թէ իբրեւ ծառայ գիտող մեղաւ քեզ Հայաստան.
 վասն այնորիկ անխնայ դանեցեր զնա սաստիհհարուած հե-
 ծանաւ. նետիւք Թշնամեաց մաշեցուցեր զմորթ նորա, իբ-
 րու զնկուն չլլիկան դարձուցեր զառիւծապօր մարմին հըս-
 կայ որդւոցն Հայկայ, ոսկերք իւր առհասարակ բեկբեկեալ
 ի միմեանց ցամաքեալ ցրուեցան ընդ երեսս օտարափայր
 դաշտաց. որպէս հրէական ազգին ի դաշտին Բաբելոնի :
 Դու ցե՛րք այսպէս անշունչ Թողուս Լքանես զոսկերս կեն-
 դանւոյն Հայաստանի իբրեւ զմեռեալ յաւիտենից :

Ճանր ծանր աղէտք անհնարին Թշուառութեան բար-
 դեցան կուտեցան ի վերայ Թիկանց որդւոցն Արամայ. ճըմ-
 ւեցին կորացուցին բարձրուի նորա մինչեւ ի գետին. չհարէ
 այլ եւս խլրտիլ ի տեղումէ իւրմէ ոչ յետ կոյս եւ ոչ յառաջ
 կոյս մղիլ : Զաջս իւր միայն ի վեր համբարձեալ ի լերինս
 իրաւեաց զօգնուի կարգայ. ո՛հ, մի Թէ փակեալ եւ արգել-
 եա՛լ են առաջի աղօթից իւրոց գրուէք երկնից Այրարատայ :

Մինչդեռ բարձրացեալ մտօք զքօնիւր աչք իմ, ձեռմէի

անապատայլ ոտիւք ի բարձրութիւն գահի մեծին Մասեաց
որպէս սէգն այն Նաբուգոդոնոսոր ի տանիս Բաբելոնեան
պալատին շուրջ հայեցեալ անդուստ զխոնարհ բլրօք՝ ասէի
իսկ իմում, թէ բարձր եմ ես քան զհամօրէն լերինս աշ-
խարհի. եւ ո՞ զիս կարէ իջուցանել աստէն : Որոտաց Տէր
սրամտութեամբ իբրու զամպ ի բարձանց, կայծակուեա բար-
կութեան իւրոյ թօթալեաց ի վերայ գալաթան իմոյ խո-
նարհեցոյց մինչեւ ի գետին. ավիշեալ կամ աւասիկ թէ ո՞ր-
պէս իջի ի բարձրութենէ անտի :

Ես ծառ էի այն երկնամբարձ, հովանիք ոստոց իմոց իբրու
զլրան. շրջալիակելով պատասպարէին զսահմանս Հայրենեաց.
որում չկարէր մեղանչել արեւապաշտն Պարսիկ : Աւաղ, հը-
րեշտակն արդարութեան երկնից տապարաւ ցամառն իւրոյ
հարեւ կտրեաց զիս. յերկիր տապալեցայ ահագին դժուրդ-
մամբ, վիշեցան լեխեցան ամենայն ուղեղք փառաց իմոց :
Այսպէս խոնարհեցայ, որ բարձրացուցանէի զանձն իմ :

Ամենակալ Տէր, մինչդեռ յաղթական երկաթաբլի սաղայի
ես ի դաշտ պատերազմոց, զօրավարքն իմ անձնանուէր է-
ին քան զզօրավարս սիրեցելոյն քո Իսրայէլի. զճանապարհս
արշաւանաց իմոց, ո՞հ, խցեր կուրացուցեր. նկուռն եղեւ
անպարտելին Հայ առաջի վատազօր ազգաց. զառիւծա-
տիպ արծուանշան դրօշս Հայկազանց, որ զյաղթութիւն
կարապետէին, յաւար ետուր թշնամեաց նորին. Բաբելոն-
եան բռնուէ խորտակիչ ազատն Հայկ՝ ստրուկ արարեր ինոյն
իսկ յիւրակերտ ազատ գերդաստանին իւրումն Հայկաճորոյ :

Տէր, դու յիթէ իբրեւ առիւծ դարանակալ եղեր ինձ,

որպիսեօք իսրայէլին քո Յակովբայ . մտեր զհետ իմ հալածեցեր հասեր եւ հարեր : Մինչ ես իբրեւ ապաւէն անքոյթ ապաստանեալ էի ի բարձր աշտարակ Արշակունեան գահուն՝ իջուցեր զիս անտի . փախեալ ի չքնաղն Անի , ուր նոր հոգի առեալ կազդուրեալ՝ շրջափակեցի զանձն իմ երակի անմատչելի պարսպօք : Վա՛շ , հրճուեցաւ հոգի իմ կարծեցի թէ դո՛ւր զաղատութիւն խաղաղութեան :

Բարէ , կորեաւ յոյս իմ այս , ի նանիր վաստակեցի , ի զոյժնեցի եւ զարդարեցի զմայրս քաղաքն Անին : Դու Տէր տիեզերաց պահապան , զի՛ է , զի՛ դարձուցեր զա՛յս քո յինչ եւ ոչ պահեցեր զքաղաքն իմ . մի սրդեօք , ամբարշտեցան քաղաքն իմ , զի կործանեցեր զայն : Այո՛ Տէր , դատաստան քո ճշմարիտ է . փոխանակ . զի չարարի իրաւունս եւ ոչ օրինօք սրդարութեան քոյին պարսպեցի զայն . ուրով դեռ կանգուն մնայր ինքն եւ ես ի վերայ Բաղրատունեան գահուն :

Իբրեւ տեսի թէ այլ եւս չկարեմ ժուժել հանդարտել յերեսաց բարկութեան քոյին , զայս ինչ եղի ի մօտ իմեւ բոկանի ոտիւք , մերկ եւ կողոպոտ փախչիլ թագչիլ ի քեզ առ ժամանակ մի , զի դէթ ցասման քոյին տեղի տուեալ անցցէ յինչն . ընդ ծով եւ ընդ ցամաք անցեալ տաժար նութեամբ հասի մինչեւ յաշխարհն Նիլիկիոյ , զբկեալ հեռացեալ բոլորովին ի բնականութեանդ հայրենեաց իմոց :

Վայելուչ էր իսկ հալածելոյն ի քէն Արծուոյն ! Հայտնաւորեմ : անդ ի գլուխ Տորոսեան լեռանց ի միջի սնտառաւ զարդ հովտաց շինել զբոյն իւր եւ անդ իբրեւ ի թագաւոր պահել զթագ հայրենի ժառանգութեան իմոյ : Դու Աստուծո՛ւմ :

ՍՈՒՆԱԾ վրէժխնդիր , որ զմեզս հարցն յորդիս հատուցա-
նես, ո՛հ, ոչ թողեր զիս հանդարտիլ եւ անդ. այլ ի ձեռս զի-
նու շրջափակեալ անադորոյն նեղչաց հալածեցեր անդուստ
հասուցեր մինչեւ յաշխարհն Եւրոպիոյ :

Յիս, Տէր, ի նորընձիւդ բողբոջ դժբախդ Լեւոնս Ռուբին-
եան տեղացեր յոյժ զկարկուտ սրտմտութեան քոյին . ոչ
անխայեցեր մինչեւ ի վերջին թագասերունդ ծիլս . առեր
լինէն զթագ , գէթ տայիր ինձ ամի մի հող ի հայրենեաց
տեղի գերեզմանի իմոյ . աստ ի տարաշխարհիկ օտարութեան
հառաչելով մաշելով մեռայ ես կաթօտութեամբ հայրենի
աշխարհին , իբրեւ ազքատ անշուք իբրեւ պանդուխտ ան-
տերունչ զանթագակիր գլուխն իմ ի հող աւանդեցին ձեռք
հիւրասիրին Գաղղիոյ :

Սեանք թագին , կեանք իմ Լեւոնիս ծածկեցաւ ի շիրիմ
օտարութեան . ես վերջալոյս արեւ Հայոց ծագեցայ ի Մաս-
եաց գագաթէն , ճառագայթիւք փառաց բարձրացայ ի կա-
մար միջօրէի ի Վաղարշապատ եւ յԱնին : Երթալով եր-
թայր երեկոյանայր ինձ ժամ ի սահմանս Արիկիոյ . ո՛հ , մի
թէ եւ էս իբրու զարեւ ծնեալ յարեւել կուսէ մօրի յա-
րեւմուտս : Իջին թաղեցան ամենայն փառք Հայկազանց
ընդիս ի տապան . չմնաց եւ ոչ գիշերացեալ աստղի մի նշոյլ
ի յոյս եւ լոյս հայրենի նսեմացեալ տանն :

Այլ քո ողորմութիւն անսպառ ծով են քան զՈվկիանո-
սի Զուրս եւ ոչ երբէք նուազին կամ պակասին հոսանք գե-
տոց առատ գթութեան քոյին . դու կոչեցեր զերեկոյն այն
ի վերայ իմ , դու դարձեալ գիտես բերել զառաւօտ . քեզ

սպասեն ակնկալութեամբ չորեքհարիւրամեայ չորացեալ
կերբ Լեւոնիս . քոյք իմ եւ օրիորդք Հայոց ընդ Մարմա
եւ ընդ Մարիամն աղերս մատուցէք առ ոտս Յիսուսի .
մնամ ես Հայկազն Ղազարոս . . . համբերեալ սպասեմ
միայն կենարար ձայնի նորին :


Դու, Աստուած արդարաւրէժ , որ տառապեցուցեր է
Հայաստան , դու դարձեալ ըստ բազմազեղ ներողութեան
քոյին ողորմեացիս նմա : Վասն այսորիկ օրհնեացէ զքեզ
Ժողովուրդ աղքատ, Ժողովուրդ զրկեալ, Ժողովուրդ ցրու
եալ : Լեր Տէր , խոնարհին օգնական , տրտմեցելոյն միկ
թար, կարօտելոյն կերակրիչ , ծարաւելոյն ապաւէն , թաղ
կացելոյն ուշաբերիչ, կործանելոյն վերականգնիչ , մեռելոյն
յարուցիչ :

Յիշեա զմեզ Տէր , աղաղակեմք առ քեզ ձայնիւ սուրբ
Երեմիային քո, յիշեա Տէր , որ ինչ անցք անցին ընդ մեզ .
ահա նուաղեցաք մեք քան զամենայն ազգս . հայրենի ժա
ռանգութիւն մեր դարձաւ յօտարութիւն եւ բնակութիւն
մեր ինչդեհութիւն . իբրեւ անտերունչ որբ մնացաք մեք .
ոչ գոյ մեր հայր եւ մայր խնամակալք Հայաստանի :

Յիշեա Տէր , ոչ եօթանասուն , այլ աւելի քան զչորեք
հարիւր ամէ , զի վարեցեր զմեզ ի Բաբելոն ստրկութեան .
միթէ առաւել մեղաւ Հայն , քան զՀրէայն . որով բազմ
մապատիկ պահանջես ի նմանէ զվրէժ հատուցման : Դար
ձն Տէր , զգերութիւնս մեր որպէս զուխս ի հարաւոյ , լոր
դեցին Հայք գերեզարձուք դարձեալ ի հայրենին Երու
սաղէմ . ոտեր մեզ առաջնորդ Եզրաս եւ Զորաբարէլ . շինես .

ցեն թող կրկին կործանեալ աւերեալ տաճարք Հայրենեաց :

Իսկ դու ողբանուէրդ հայրենեաց Արծուիդ Վասպու-
րական, ելաց Երեմիասն գիւրն Երուսաղէմ, եւ դու զքոյդ
Հայաստան . դու իբրեւ զՀրէական մանկտին նստեալ ի
հրապարակս Հայկազանց, ողբացիր յոյժ եւ կական բար-
ձեր. այլ ո՞վ է, որ լսիցէ զձայն ազիզորմ ողբասացիդ, ո՞վ է,
որ ընդ քեզ լացցէ. ո՞վ է, որ ընդ քեզ կոծկիցէ : Օ՛ն ուրե-
մին տուր աստէն ձայնիդ դուլ եւ զադար մինչեւ լսիցեն
քեզ երկինք :



ՀԱՆԴԵՍ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆՑ

ԼԵՂՈՒ ՆԵՆԳԱԻՈՐ ԵՒ ՉԱՐԱՆՈՍ

“ Զէ Գաղի խել կամ զի՞նչ
յաւելի, լելու նելգաւոր ” :
ՍԱՂՄՈՍ

ՄԱՐԴԱՍՅՈՒՆ կրից ամէն ճիւղերն ալ արմատ ունին :
Քարծեմ թէ այս նշոված ու չորցած ճիւղին արմատն ալ
նախանձ կամ ատելութիւնն է :

Հարցնւր, բարեմիտ ընթերցող, թէ արդեօք այս ժանտ
կրից արմատն ո՞վ անկեց, եւ չի գիտցուիր թէ ասոր մշակն
ո՞վ է : Աւրմանահանն Յիսուս բարի սերմ ցանեց մարդկային
սքտի ագարակներու մէջ, ոչ թէ չարախօսութեան օրումները :

ուստի յայտնի է թէ ասոր մշակ Հայր Աստուած չէ. հապա
ստութեան հայրը՝ սատանան է :

Աշխարհիս վայելչութիւնները բնութեան արարիչ ամե-
նուն հաւասար բաշխած է. բայց չարասիրտ մարդիկ չտա-
նելով իրարու բարեբախտ երջանկունք , կսկսին ինախանձ
չարժիլ եւ կջանան խցել Աստուծոյ պարգեւած բնատուր
աղբիւրի ակն : Թէ եւ ամէնքն ալ յայտնի կերպով չըկը-
նան իրարու վնասել, բայց կերթան կփոխան աշխարհիս իշ-
խաններուն ակաջները քսու եւ չարախօս լեզուով , կ մատ-
նեն ընկերջ արդար վաստակը եւ անգին կեանքը :

Այս նենգաւոր չարախօսութեան վնասն շատ մեծէ. կը
սխալի նա որ իւր մաքուր սիրտ ու միտքը այս մահա-
ցուցիչ թոյնին աման կ դարձնէ : Բնութեան Արարիչը մար-
դոյն բանականութիւն տուաւ, որ միշտ ի բարին շարժի
միջնորդութեամբ լեզուին : Արդարեւ լեզուն մարդկային
ընկերութեան բուն հաստապլնդ. կապը է եւ մարդկութեան
ու բանականութեան կնիքն ու նշանն է . խորհուրդ, հան-
ճար, խելք, ատեան, բեմ, ճարտասանութիւն եւ ասոնց նը-
ման բնական ու ստացական ձիրքերը մերկ առանց հոգի
մարմին մի են, թէ որ լեզուն զգայարանք իբրեւ հոգի
կենդանութիւն չիտայ եւ իւր շնորհալից շարժմունքով չը
զարդարէ ատոնց մերկութիւնը : Բայց նայենք արդեօք
ասոր շարժումն բնութեան արարչին կարգը կ պահէ՞, եթէ
ընդ հակառակն՝ այս բարութեան գործին վատ չարախօ-
սութեամբ դէպ ի չայն շարժելով՝ կապականէ ընկերն եւ
կը պղծէ իւր բերանը :

Առաքեալը այս անշնորհ լեզուն անիրաւութեան զարդ-
կանուանէ. արդարեւ ինչպէս ամէն զգայարանաց անդամ
ները առանձին առանձին սեպհական պայմաններով իրենց

պաշտօն կլարեն, լեզուն ալ նոյն պայմաններուն տակն է ։
 Իւր պայման կամ առարկայն ասոնք են . Ճշմարտութիւն , այոն
 այո՞, եւ ոչն ոչ . ասկից աւելին չարէն է . կսէ Աւետարանը ։
 Սակայն նենգաւոր լեզուն երբ այս օրինաց պայմանները
 մերժէ, եւ ինքն չարախօսութեան , քսութեան , բանսար-
 կութեան , հայհոյութեան , գրգռութեան , կեղծաւորու-
 թեան , ստութեան եւ ուրիշ նման տեսակ չարիքներով գոր-
 ծիք լինի , ճշմարիտ է Առաքելոյն ասած , ինքն է միայն ա-
 նիրաւութեան զարդը ։

Բայց թէ ինչո՞ւ համար Առաքեալը չար լեզուին համար
 անիրաւութեան զարդ կըսէ , առանց դիտման չէ ։ Մարդ-
 կային ազգի մէջ պատահած ամէն տեսակ անիրաւութիւն-
 ները ու զրկանքները այնչափ մերկ ու խայտառակ են , մինչեւ
 քաղաքացին ալ , շինականն ալ , ռամիկն ալ կարող է զին-
 քըն տեսնալ , եթէ անիրաւութեան զարդ լեզուն իւր
 ճարտարութեան շարժումն գործի չըդնէ ։ Մարդկային
 ընկերութեան շարժող մեքենայ մի է , ամէն կողմ կը դառ-
 նայ եւ աչք խաբելու համար ամէն գունով կ'գունա-
 ւորուի . ասոր համար իրաւամբ կ'ոչուերէ անիրաւութեան զարդ ։

Մարդկային բարուց մէջ շատ տեսակ մոլութեան կիր-
 քեր կան , որոնցմէ շատեր առանձին առանձին իւրեանց վատ
 պաշտօն գործի կ'դնեն եւ միայն կ'գործեն ինչ որ գործեն .
 իսկ այս անիրաւութեան զարդը գիտես թէ ամէն կիրք-
 րու ալ ինքն վարձաւոր ծառայ մի է ։ Այլ ո՞վ կարող է
 զինքն մեղադրել , մինչդեռ ինքն փափուկ ու փոքրիկ ան-
 դամ մի է . զինքն շարժող գլխաւոր մեքենան սիրտն է ուս-
 կից ինչպէս նեխած լճէ մի կ'բուրեն դէպ ի դուրս դար-
 շահոտութիւնք եւ խորշակահար կապականեն մարդկեղէն
 անդաստանը ։

Բնութեան արարիչը սիրտն բարութեան եւ օրոյ առաջին կազմեց. որպէս զի անկէց բարութեան կաթն բղխելով՝ ընկերական կենաց քաղցր կերակուր ճամբէ : Սակայն խումբ մի մարդիկը չարակամութիւն կ'սցեն այս բարութեան աղբերակն. եւ փոխանակ քաղցր կաթին, դուրս կ'բլխեն դառնահամ ջուրը, ջուր՝ որ մարդկեղէն անդաստանի մէջ մըտնալով՝ արմատներն անգամ կ'չորցունէ, թող թէ ձիւղերը :

Երկնից իմաստութեան ձեռք մարդոյն սրտին մէջ անգին գանձմը դրաւ, այսինքն իւր սուրբ պատգամները. ուրուն համար նոյն Դաւիթը անձկութեամբ կ'խօսի « Բըղխեսցէ սիրտ իմ զպատգամս քո բարի . . . » : Բայց չարաբարոյ հոգին իւր սրտի շնորհաց գանձարան՝ սատանայի չարութեան անօթ կ'դարձունէ. ու փոխանակ Աստուածային պատգամներուն՝ սատանայի թերազրութեան թոյները կը բղխէ. ի՞նչպէս. « Գնա մատնէ ընկերդ չարախօսութեամբ, զրպարտութեամբ եւ վատահամբաւութեամբ » :

Այն, նենգաւոր սիրտ եւ վատ չարախօսութիւն, թէ որ Աստուած ատեան մը բանայ ու բոլոր անիրաւ կիրքերու դատաստանը տեսնայ, կարծեմ թէ ամէնէն աւելի պատիժ պիտի ընդունի այս դժոխային սատանայաշունչ կլիբը. վասն զի ինքն է՝ որ մարդկային ընկերութեան խաղաղ ծով կը վրդովէ. կ'փչէ սաստիկ չարախօսութեան քամին եւ խռովութեան լեռնաբարձր ալիքներ կ'հանէ. եւ ցամաքին վերայ թափելով՝ կաւերէ բոլոր արգասաւոր եւ բերուն մարդկեղէն բուրաստանները :

Արդարեւ օձի լեզուն թիւնաւոր է, բայց անոր թոյն միայն անձի մը կ'մնասէ, որոյ վերայ որ կ'ծափի. իսկ չարախօս նենգաւոր լեզուի թոյն միանգամայն ազդ մի կ'մահացնէ եւ յաւիտենից հոգերուն տակ կ'թաղէ : Չարախօս միշտ

ծուռ կղանտի եւ վայրագար կբարբառի , կջանայ միշտ
խորխորատ փորեւ եւ ընկերն նորա մէջ գլորել :

Կենդանի է մարդ, կենդանի իւր բարի համբաւ եւ գործըն-
սակոյն չարախօսին լեզուն մահացուցանել կջանայ :
Կինչդեռ առաքելին միամտութեամբ իւր ճանապարհ կեր-
թայ , նա իբրեւ դարանամուտ աւագակը նորա վերայ կը
յարձակի : Կլիւնն մինչեւ ոտքը քեղ մի ողջ թող չլուծուի
կը վիրաւորէ . մինչեւ յամբ ճշմարտութիւն իրեն օգնու-
թիւն հասնի, նա պիտի հեծէ եւ հառաչէ : Աշխարհը խա-
ղաղութիւն բերող Յիսուս մարդիկները հաշտութեամբ ի-
րարու հետ կ'կապէ, բայց նա նենգութեան յետանով սըր-
ուած՝ կ'կտրէ միշտ այս հաստատուն կապերը :

Ուրեմն ինքն ալ արդեօք սատանայի չափ հակառակորդ
չէ՞ Աստուծոյ դէմ . այո՛ , իսկզբանէ անտի կ'տեսնամք որ
սատանան իւր հրապուրանաց դառնութեան թոյնը միայն
յրախտին մէջ , մինչդեռ մարդ չի գտաւ , օձուն միջնոր-
դութեամբ թափեց իւր լեզուն Եւային ախանջը, բայց երբ
բազմացան մարդիկները, ըսել է որ նորա չարութեան գոր-
ծիքներն ալ շատցան . ոչ մի բան սատանան առանց արբաւ
նեկութեան մարդոյն՝ չի գործեց . միայն Յորդանանու մօտ
տեսաւ գերմարդկային զօրութեամբ ասպարէզ ելած է
քաջամարտիկ զօրավար մի . մարդոյն արբանեկութիւն տկար
համարելով՝ ինքնին իսկ մատեաւ փորձել զանի . այս փոր-
ձին մէջ ստոյգ ճանչցաւ թէ ինքն առանձին առանց չար
արբանեկութեան մարդոյն կարող չէ բան մը գործել . եւ
իւր ամէն խորամանկ ձեռնարկութիւնները ի դելեւ կել-
լեն եւ կ'ապտառակուին մարդոյն խորագլուխութեան եւ
հանձարոյն առաջը . միտք դրաւ որ այնուհետեւ մինակ չը
պատերազմի . ուստի գպիրները , փարիսեցիներ եւ քահա-

նայապետները իբրու գործակից առաւ իւր ձեռքը , սկսեց նոցա նենգաւոր եւ անիրաւ չարախօսութեան լեզուներով Աստուծոյ դէմ ճակատ ելնել : Որով ուղիղ կ'հասկցուի թէ սատանային կորստական գործքերուն մէջ՝ մարդկային դասէն ամենէն աւելի արքանեկութիւն ընող չարախօսութեան դիւաշունչ լեզուներն են : Այո՛ սատանան պիտի տկարանար մարդկային գորութեան առաջը , եթէ չարախօսներ իբրեւ յառաջնութաց մատնիչ նորա խաւարակուռ բանակին զրօշահները չի կրէին : Եօթն հազար տարուան աշխարհիս գլուխ եկած դժնդակ աղէտներուն մեծ մասն՝ կարծեմ չարախօսներուն երեսէն է : Այնչափ թշնամութիւն , ատելութիւն , վէճ , երկպառակութիւն , բարկութիւն , պատերազմ , սուր , արիւնհեղութիւն , աւերումն , եւ այլ բազմապիսի աղէտները ո՞չ ապաքէն նոյն նենգաւոր եւ թիւնաբեր լեզուներուն ժանտ արգամբն են :

Բայց մենք թող տանք աշխարհին , մեր Հայաստանին համար խօսինք :

Եկեալադիր ընթերցող , զգուշութեամբ երթանք նոյն խռովութեան դաշտին մէջ , զոր չարախօսութեան մահալից սուրը արեամբ ողողեց . անդ սուր աչքովմը նկատենք ու տեսնանք թէ ո՞վ մեզի ծանօթ է եւ ո՞վ մեզի ճայն կուտայ . ան , Հսոյրց բախդ լճացեալ արեանց մէջ շնչասպառ լինելով՝ կաւաղէ ողորմաբար եւ այս Դաւիթ մարդ արեւի ցաւալի բանը կասէ . « Խօսեցան զինէն լեզուաւ նենգաւորաւ եւ բանիւ ատելութեան զիս պաշարեցին » : Դաւիթ մարգարէն գիտես թէ թշուառ Հայաստանին համար մարգարէացաւ եւ այս բան նորա համար կնքեց . վասն զի մեր ազատ Հայայաստան պաշարող կամ մեծամեծ ամուրները տապալող՝ Հայ Եղեղաններուն չարախօս լեզուններն էին :

Քոյոր Հայկազանց սովորական կարծիք մի է, թէ մեր նախնի երջանիկ Հայրենիքը՝ մի միայն երկպառակութեան կամ անմիաբանութեան երեսէն այսպէս թշուառացաւ եւ ապերձանիկ դարձաւ : Սակայն պէտքէ ստուգութեամբ քննենք. ո՞վ էին արդեօք այդ երկպառակութեան ժիր արւաճեցանքը, եթէ ոչ մատնիչ չարախօսութեան խումբ մի, որոնք իւրաքանչիւր դարերու մէջ երեւեցան ու Հայրենի Տան ընտանի զաւակները ճեղքեցին բաժանեցին միութեան արմատէն : Սրեցին լեզուին եւ իժերուն թոյները իւրեանց շրթունքներուն ահլը թաղուցին. վաղեցին մէկն դէպ ի Յունաստան, մէկն տէպ ի Պարսից դուռը, մէկն դէպ ի Բաբելոն, ինչո՞ւ համար, Հայաստան մատնելու համար . այն, որդիք չարածնունդ, որդիք անօրէնութեան, որդիք ապաշնորհ եւ ուրացող Վասակները եւ Մեհրութաններ, փառասիրութեան ազատութեամբ մատնեցին իւրեանց հարազատ մայր Հայաստան, որ ահա թշուառութեան, սորրկութեան եւ աղքատութեան խաչին վերայ ելած կ'հեծէ :

Չարախօսութեան լեզուն՝ իբրեւ Իտայէլեան բանակին այն թիւնաւոր օձը Հայաստանի բանակը հարկանելէն յետոյ, կ'գործածէ իւր համար նոր ճարտարարուեստ հեռագիր մի (թելէկրաֆ) . որով ամէն տեղեր շուտով լուրեր կ'տարածէ եւ ինքն անձամբ կ'հասնի, որպէս զի արդէն երկնից այցելութեան բարձր ոգեւորող ձեռքը, չլինի թէ թշուառացեալ Հայաստանի նախնի Հայկազանց աճիւնները նորէն առաջին մարդոյն պէս կաւ արարեալ ստեղծագործէ, տալով նորահրաշ կենդանութեան հոգի :

Ո՛հ, մի թէ ներկայ դարուս չարախօսներուն մատնութեամբ իւր թաղումն ալ պիտի տեսնայ մեր հայրենիքը . կամ թէ տեսնալէն յետոյ՝ մինչդեռ իւր ոսկորներ ծանր

Ժանը վեճերու տակը մեռելութեամբ և հեծեն, արդի Հայ-
րենասէր ու հարազատ որդիքներուն բարեխօս լեզուները
պիտի կարենան վերստին զինքն յարուցանել :

Խօսքերնիս առ ձեզ դարձնենք, դուք միակ յոյս եւ
լոյս Հայաստանի ուսումնասէր եւ հայրենասէր երիտա-
սարդ եղբարք :

Տգիսութեան դարերն անցան, հայրենեաց եւ ազգի
դաժան հարստահարող տարիներ իւրեանց նենգ եւ խռո-
վայոյզ շրջանը կատարեցին. հինն մեր աշխոյժ երիտասարդ-
հայրենիքը ծերացոյց. բայց նորն ձեզ կապահ : Ահա խա-
ղաղութեան նոր դարուն, ահա՛ լուսատու օր. գործեցէք
աւրեմն գործ տունջեան եւ մի խաւար գիշերի : Թող քա-
րողուի հրապարակներու մէջ ձեր հայրենասիրութեան գոր-
ծըն. եւ ոչ թէ դադտագողի դարանամուտ աւազակներու
նման առանձին գործել եւ որոգայթ լարել անմեղին : Ձեր
բարեխօս լեզուներ ասկէց ետք հայրենեաց եւ նորա որդ-
ւոց անբուժելի վէրքերուն դարման պիտի մատակարա-
րեն, որ նախնի անհարազատ որդիքներէն և կրեն ցարդ :
Ձեր անդին կենաց օրեր հասարակութեան բարելաւու-
թեան համար պիտի անցանեն, որպէս զի իւրաքանչիւր ոք
իւր իրաւանց տէր մնայ :

Ձեզ ապացոյց և հանդիսանայ Սահմանադրութեան բա-
րերար ձեռն, որ վերջին դարուս մէջ հրաշիւք երեւեցաւ,
մեր ծերունի Հայաստանի վշտացեալ սիրտն սփոփելու :
Իրաւունք քուտած բառն՝ հասարակութեան ալ բաժին
հանեց Սահմանադրութեան օրէնքը, եւ ոչ թէ մասնաւոր
անձինքներու վասնզի ազգային իրաւունքները իբրեւ սեպ-
հական ստացուած՝ միայն իրենց և համարէին. բայց արդ
նոյն իրաւանց շնորհն ամենուն ձրի պիտի բաշխուի. պիտի

վայելէ հասարակութիւն եւ օրհնէ զԱրեւն բարեխնամ
ՕՍՄԱՆԵԱՆ պետութեան, որ այսպիսի ցանկալի նոր օրեր
շնորհեց իւր հպատակ ժողովրդոց. որպէս զի վերջին Հայաս-
տանի դժբախդ ժողովուրդը իւր նախնի դարերու երջան-
կութիւնը վայելէ իւր հպատակութեան վիճակի մէջ:

Ուրեմն ազգասէր եւ աշխոյժ երիտասարդք, քաջ հան-
դեսացիք այս նոր յառաջադիմութեան հանդիսին մէջ. ուր
լաւ կ'կրթուիք՝ բարերար հանդիսանալ ընկերոջ եւ նշուած
չարախօսութեան անունը իսպառ մոռանալ:

Նոր հարազատ որդիք Հայաստանի, մտէք ձեր Մօր Թե-
ւերուն տակը եւ վերցուցէք նորոգութեան լուսատու ա-
րեգական դիմաց. Թող արծուոյ նման նորոգուին մեր Հայ-
աստանի հնութեան թշուառուէն փետտած փետուրները,
որպէս զի կրկին կենդանուէ ոգի առնուեալ ապրի յաւիտեան:

Դառնանք ձեզի հետ խօսինք, Հայրենեաց մօտնիչ, նեն-
գաւոր եւ չարախօս լեզուներ, Հայաստանի ողջ մարմին
ոտքէն մինչեւ ի վրուխ դուք միայն ձեր օձահար Թոյնով
մահացուցիք. բայց Դաւիթին պէս ես ալ հառաչելով հար-
ցնեմ ձեզմէ. այդ ձեր զիւսպաշտօն չարախօսութենէն
ի՞նչ վատկեցիք եւ ի՞նչ պսակ տուաւ ձեզի ձեր հայր սա-
տանան: Ի՞նչ շահեցար, Վասակ, բայց միայն անձինդ
որդնայից սատակումն. ի՞նչ շահեցար Մեհրուժան, արդեօք
զխողդ այն հրաշեկ երկաթին սրակը, որով չորացաւ ու
խամրացաւ ուրացող եւ չարախօս լեզուդ: Դուք հայ-
րենադրութիւն վատ որդիք, այս ամէն բաները բրիք ու կար-
ծեցիք Թէ Գրիգորի, Ներսէսի ու Իսահակայ Աստուած
կը լռէ. տեսա՞ք Թէ ի՞նչպէս Աստուծոյ արդար վրէժխնդ-
րութեամբ չարամահ սատակելով՝ ձեր վատ հոգին փչեցիք:
Այսպէս է վախճան ու դժբաժնի չարախօսներուն, մատ-

նեալ Հայաստան, օսկայն դու յԱճ յուսա եւ կանչէ . « Դու
Տէր՝ Տէր զօրուէց, արա ընդիս ըստ անուան քում . զի քաղ-
ցըր է ողորմուի քո եւ փրկեա զիս անիծապարտ Հարախօսեա-
լուն ձեռքէն . զի ես քո աղքատ եւ տնանկ Հայաստան եմ »

Աբգար Սարկաւադ . Գրիգորեան .
Աշակերտ . Ժ . Վ . Վարդապ .

Ա Ռ Ա Ս

Աճառ

Ե

Ճոյն

Երկուսք մեզի ազդարար
Մարդկան ազգի էս աքաղաղ .
Որ միշտ կանչէ ծոյլ ականջին ,
Եւ իր օրհնէ անուն փրկչին :

Ժիւ աքաղաղ գիշերն ի բուն
Միշտ կը կրկնէ իւր կիւկիկուն ,
Ծոյլ չի լսեր ականջ խուլ է ,
Խօր քունին մէջ կը մնայի :

Իսկ երկուշաճն միշտ արթուն է
Աքաղաղին նա կարօտ չէ ,
Կելլէ շուտով եւ կաղօթէ ,
Կերթայ շուկան գործ կըսկսէ :

Ծոյլին՝ աբեւն ալ ձայն կուտայ ,
Երբ երգիքէն ներս կը մտնայ .
Իսկ նա պառկած դեռ կը խորեայ ,
Աչքեր կը գոցէ , որ չի տեսնայ :

Խեղճ աքաղաղ յուսահատած ,
Անխիղճ հեղձ ծոյլ դեռ . կայ օրաւ կած
Դանդաղ դանդաղ երբ որ ելնէ ,
Կօրօշկոտայ , ժանիք կը խառնէ ,

Թէ ինչո՞ւ մեղի ձայն չեն տուեր .
Չայն չեմ տուեր , խուլ անզգայ
Գիշերն անքուն եմ . քեզ համար ,
Այնքան ճշալ այնքան պօռալ ,
Քո ականջներ մի թէ եր քալ .
Ե՛ շատ խօս ի՞նչ է անաճդ :

Որ միշտ մէկ ձայն բերանդ առած
Կկարկաչես կմարմանչես
Խօսքի ի՞նչ է ի՞նչ տի անեալ

Աղօթք , պաշտօն , ես ի՞նչ անեմ ,
Ուտենք , խմենք , պառկենք , քնենք
Այսօր չուտենք , վաղ տի մեռնենք
Մեր բարութիւն վի՛ր տի թողնենք

Այդ է քո միտք ու ծոյլ ու հեղձ
Ինչո՞ւ կանէք ձայն չեն տուեր ,
Քո ծուլութիւն է չի թողներ ,
Ինչի պատճառ դու մի բռնեք :

Չեր մեղք ձեր վրին , ես ի՞նչ անեմ
Ալ չեմ խօսիլ , ու կ'ըլեմ .
Խուլ ականջին ոչինչ է ձայն
Թէ աքաղաղ թէ ժամահար :

Այս օրինակ է քարոզչին
Որ կ'անչէ միշտ ի բեմին ,
Թէ ժողովուրդ ծոյլ եւ խուլ է ,
Շատ մի խօսիլ ձայնըդ կտրէ :

Բայց եւ խօսէ յոյս մի կտրէր
Այդ քո պարտքն է , տուր վնաս
Դէտ ես , կանչէ եւ աղէ արտ
Գուցէ անօրէնն զգուշանայ :

Վահրամ Ղաչար . Նաչաբեան .
Աշակերտ . Ժ . Վ . Վարդապ .

ԱՆՁՆԱՆՈՒԷՐ
ԳՈՐԾԱԿԱԼՔ ԸՆԿԵՐԱԳՐՈՒԹԵԱՆ :

ՊԱՆ.Պ.Մկրտիչ Տ.Ատոմեան :

ԲԱՂԷՇ.Պ.Տիգրան Կալփաղչեան Պօլսեցի :

ԲԵՐԻԱ.Յովհաննէս Աղա Բուրքջիխանլիանց :

ՄՈՒՇ.Աղա Վարդան Մամիկոնեան :

ԿԱՐԷՆ.Խաչատուր Խան Տ.Ներսիսեանց :

ՏՐԱՊԷԶՈՆ.Պ.Ստեփան Մ.Յակովբեանց :

ՊՕԼԻՍ.Ղեւոնդ Վարդապետ միաբան Վարապայ :

ՏՓԽԻՍ.Պ.Համբարձում Էնֆիաճեանց հրատարակիչ Սթ-
ուոնկ Հոյոց աշխարհի պատուական ամսագրոյն, եւ Պ.
Գարեգին Մուրատեանց :

ԳԱՆՁԱԿ.Պ.Ներսէս Աբրահամեան :

ՂԱՐԱՐԱՂ.Ընթերցասիրաց Թանգարան :

ԱՂԵՔԱՆԵՐՊՕԼ.Սիմէոն Սարկաւադ Օրէնսուսոց
Սնքուէր ուսումնարանին :

ՆՈՐ ՊԱՅԱԶԻՏ.Աղա Բարսեղ Արծրունեաց :

ԵՐԵՒԱՆ.Պ.Զաքար Տ.Յոհաննէսեան :

ՆԱԽԶՈՒԱՆ.Մ.Մկրտիչ Թուրեան :

ՎԵՐԷՆ ԱԳՈՒԼԻՍ.Պ.Գրասպար Աշխենեանց :

ՆԵՐՔԻՆ. — Ուսումնասէր Տ.Յակոբ բահանայ Տ.

Անդրէասեանց :

Դ ԻՐԷԺ.Մատթէոս Նազարեանց եւ Յոհաննէս Շխեանց

Ղարապղցի վաճառական ուսումնասէր Պարոնայք :

ՍԱԼԱՄԱՍ.Աղա Պատալ Արղունեան :

ՐՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ ՆԻԻԹՈՑ .

ՀԱՅԿԱԶՈՒՆԷ ՀԱՅՐԵՆԱՅ ԿԱՄ ԱԶԳԱՅԻՆ	
ԳԱՒԱՌԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԷ .	461
ԶՈՂՔ ԵՐԵՄԻԱՅԻ ԴԱՐՁՈՒՑԵԱԼ ԻԶՏԱՍՏԱՆ	
(ԸՄՐԱՀԱՅՈՒՄԻՆ Է՝ ԳԵՂ. ԴԷ՝ 409. 445. 477 ԷՐԷ՝)	
ԼԵԶՈՒ ՆԵՆԳԱՒՈՐ ԵՒ ՉԱՐԱԽՕՍ :	485
ԱՌԱԿ ԱՅՈՂՆԷ ԺՈՂ :	492

ԴԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԿԵՐԱԴՐՈՒԹԵԱՆ ԿԱՆԽԻԿ

Ի ՎԳՆ, Ի ԲՈՂԷՂ, Ի ՄՈՂ, Ի ԱՐԷՆԵՐԻՆ՝ Ո՞՞
 Տանցի բան շՐՐՈՂՆՅ՝ արժա՞նք ՄԷՃԻԿԻԷ .
 Իսկ ՊՕԼԻՆ Է՝ ՏՃԻՆԱԿԱՆԻ՝ արժա՞նք ԷՐԷ՝ արժա՞նք բան
 շՐՐՈՂՆՅ՝ ՄԷՃԻԿԻԷ .
 ԻՌՈ՞՞ՆԱԿԱՆ Է՝ Ի ՊՐԱՅՈՒԿԱՆ ՇՐՐ՝ արժա՞նք ՄԱՆԻԷ՝ .
 Զանապարհին ծախք ԽԵՋԷՄԵՐ ԿԻԿԻ ԺՃԱՐԷ .